# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2019 թ. ապրիլի 22-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 4ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Լիլիթ Բաբայանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ՝ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում՝

1. Աշակերտների առաջադիմության հարցը:

2. Էքսկուրսիայի կազմակերպում:

3. Ընթացիկ հարցեր /կարգապահություն,ռեժիմ,հերթապահություն/:

1. Լսեցին.- Աշակերտների առաջադիմության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Լիլիթ Բաբայանը՝ ներկայացնելով յուրաքանչյուր աշակերտի առաջադիմությունը:Մանրամասնորեն ներկայացվեց յուրաքանչյուր աշակերտի գրավոր և բանավոր խոսքը:

Ծնողներին անհատական ներկայացվեց իրենց երեխաների բացթողումներն ու թերացումները:

Որոշեցին.- Ավելի հետևողական լինել բարձր առաջադիմություն ապահովվելու համար: Այն ծնողները, որոնց երեխաները ունենորոշակի թերացումներ, որոշեցին ավելի շատ համագործակցել ուսուցիչների հետ, տանը ավելի շատ աշխատել երեխաների հետ, որպեսզի վերացնեն բացթողումները: Կարդալ և գրել դժվարացող աշակերտների ծնողներն էլ խոստացան ավելի ուշադիր լինել իրենց երեխաներին, դժվարության դեպքում փորձել ուսուցիչների հետ միասին կարգավորել ցանկացած հարց կապված դասերի հետ:

2. Լսեցին.- Էքսկուրսիայի կազմակերպում:

Ելույթ ունեցավ դասղեկ Լիլիթ Բաբայանը : Նա առաջարկեց երեխաներին էքսկուրսիա տանել Հ. Հ. Թումանյանի տուն- թանգարան և իր անունը կրող պետական տիկնիկային թատրոն, քանի որ այս տարի նշվում է Հ. Թումանյանի 150 ամյակը: Նա նաև նշեց, որ տուն –թանգարան այցելությունը կլինի դպրոցական աբոնեմենտային տոմսերով, որը տրամադրում է ՀՀ ԿԳ նախարարությունը:

Որոշեցին.- Առաջարկը բոլոր ծնողների կողմից հավանության արժանացավ:
Ծնողական խորհուրդը կատարեց ծախսերի հաշվարկ ,որի արդյունքում որոշեցին հավաքել 2000 դրամ գումար էքսկուրսիան կազմակերպելու համար:

3. Լսեցին.- Ընթացիկ հարցեր /կարգապահություն,ռեժիմ,հերթապահություն/:

Դասղեկը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն պայուսակով, դասագրքերով և դպրոցական համազգեստով, ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն, պահեն ծնող-դասղեկ-աշակերտ կապը: Քննարկվեց ընթացիկ հարցեր, որոնք վերաբերվում էին դասագրքերի պահպանմանը, աշակերտների հիգիենիկ վիճակին:

Որոշեցին.- Որոշվեց ցուցաբերել ավելի շատ ուշադրություն և հետևողականություն, որպեսզի աշակերտները ներկայանան աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Թ. Անտոնյան

Քարտուղար՝ Ա. Մանուկյան